

# ԱԼԱՇՎԱՅՐԸ

Դ. Ք. Ն. Գ. Ե. Ե. Ե. Ե. Ե.

ԲԵՆԵԼԻՈՐ ԳՐԵԿԵՆ ՈՒԽԹԻՒՆ

Ա. Ե. Ր. Հ. Ե. Ր. Պ.)

Ը.

ՄԱՆԿԱԿՈՆ ԵՐԳԵՐ

Հեղից ութ տարեկան երեխաց մը հարս կընեն, քօղով կը ծածկեն երեսը, Մէկը կը բանաց երեսը, ու միւսը կը դոցէ ու կ'երգէ.

1  
Ելում —մաղաղում, խնամի ճան,

Ելում 1) եմ քաղե, խնամի ճան,

Գոտիկս եմ շարե, խնամի ճան,

Քաղքից քաղաք ճան եկայ, խնամի ճան,

Տօպրակս լցի, խնամի ճան,

Բէրանն էլ կարի, խնամի ճան:

2  
Ոչին —մածածին, զնկիկի,

Եկած կը տանին, զնկիկի,

Տարան. թրդ տանին, զնկիկի,

Զատկին կը բերին, զնկիկի,

Կարմիր սուերով, 2) զնկիկի,

Դեղին բըներով, 2) զնկիկի:

3  
—Քեղի կիսամ մաղ մի ոսկի,

Առ պարիչի, 4) խնամի ճան:

—Մաղը ծակի,

Ասկին թափի,

Զըմ պարիչի, խնամի ճան:

—Քեղի կիսամ մաղ մի արծաթ-

Առ, պարիչի, խնամի ճան.

Մաղը կոտրի,

Արծաթ թափի.

\* Տես «Ազգ. Հանդիս» Ե. գիրք..

1) Տեսակ մը պատուզ, մոր; 2) Ատենաման; 3) Գուրապայ. 4) Հաշտուկ:

Զըմ պարիսի, խնամի ճան:  
— Քեզ՞ կիտամ գոմ մի ոչսար,  
Առ, պարիսի, խնամի ճան:  
— Գոմը բըլի,  
Ոշսար ջարդի,  
Զըմ պարիսի, խնամի ճան,  
— Քեզի կիտամ մաղ մը խնձօր,  
Առ, պարիսի, խնամի ճան,  
— Մաղը ջարդի,  
Խնձօր թափի,  
Զըմ պարիսի, խնամի ճան.  
Բարով ու խօս <sup>1)</sup> ես եկե, խնամի ճան,  
Դարտակ ու պօս <sup>2)</sup> ես եկե, խնամի ճան,  
Երկու պօլօն <sup>3)</sup> ես բերե, խնամի ճան. ¶  
Են լէ ճամբախն ես կերե, խնամի ճան:

## Բ.

## Ս Ի Բ Ո Յ Ե Ր Գ Ե Ր

1. Եարիկս ա կայներ օժի <sup>1)</sup> տանսի <sup>2)</sup> կէս,  
Միջկունքն ա զարկեր ջալապու <sup>3)</sup> պէս  
Տերեր գուրք դուման կը զարկաց կողպէս.
2. Օտին պիտուական, պատերն ա նիսշուն,  
Տղայ, քու վոջամ <sup>4)</sup> խանկալ <sup>5)</sup> արպշում,  
Քեզի չար ուզող էղնի քեզի շուն:
3. Գոյիկ <sup>6)</sup> մեմ հորդեր, թէրմաշ ջուր չի գայ,  
Ըսու մ'եմ բացե, անտէր ջուր չի կայ,  
Էնկնիմ ու ժուռ դամ քե պէս եար իդայ.
4. Ըսու մի էկաւ, ես դիցայ <sup>7)</sup> դետ էր,  
Քարվան մի էկաւ, իմ եարսի հետ էր,  
Իրիշկի <sup>8)</sup> առէց, խընճ ըմէն յետ էր.
5. Հայերն ա ժողված կէնեն ըռայի <sup>9)</sup>  
Թի թորկենք էրթանք, վարան կաւիրի,  
Տալալ <sup>10)</sup> թի նստենք, մսսեան <sup>11)</sup> չի բաներ:
6. Մշու դաշտ կասին հինգհարիր գեղ էր,  
Դացինք ու տեսանք մէկ հուրքու բուն էր.

<sup>1)</sup> Բարի. <sup>2)</sup> Պատուրկ, ունայն. <sup>3)</sup> Միջատ.

<sup>4)</sup> Այնեակ: <sup>5)</sup> Տանիք, կտուր: <sup>6)</sup> Պարոն: <sup>7)</sup> Գլակ: յաղեր: <sup>8)</sup> Փունչ:

<sup>9)</sup> Լճակ: <sup>10)</sup> Գիտենալ, ազաւազուած, գենալ, դեցայ և այն: <sup>11)</sup> Կայել:

<sup>10)</sup> Խնդեցիկ, լաւ, (իբրև միջարկութիւն): <sup>11)</sup> Բնակութիւն:

7. Ըստու բանցրիկել քու մէն ա Զօգան,  
Երկու պաղ աղբուր քու միջով ընցան,  
Մէկն ա զըս Պառին <sup>1)</sup> մէկն ա Զօգան:  
8. Ինչ որ դըխ Պառին դարիս հաւքերաց,  
Ինչ որ դըխ Զօգան, սրսուռ մարդէրաց:  
Զօգան ու Պառին. կայ Ծորաս ինե,  
Եղնինք պագրկան <sup>2)</sup> դանք իջինք ինե,  
Թի ժուռ, թի հասուն <sup>3)</sup>, մենք էլ գնողն ինք.

Հաւքունք <sup>4)</sup> վըր ծովուն անուն արօր էր,  
Գլխիկ կարմրոր, սրտիկ սևաւոր,  
Կաղենք պէշարեն, <sup>5)</sup> էրթանք հըտ էտոր,  
Ո՞ն զիմ տարու զինայ. ո՞ն զիմն ու զէտոր <sup>6)</sup>).

## Գ.

## Պ Ը Բ—Ե Բ Գ Ե Բ

Սար, սար. սարերու կիւլն եմ.

Վեռն, Սանսնի քուրն եմ <sup>7)</sup>).

Գնա, գնա, հետիդ եմ.

Կարմիր խնձոր գոտիդ եմ.

Արե նոր ա ծեղիկը ա.

Եսրո ծաղիկ դրկեր ա:

Կայներ ես մահի վերև.

Վէր <sup>1)</sup> հետ զրկեմ իմ բարե.

Տօր <sup>2)</sup> որ կ'երթաս, շուտ արի,

Եսրո մայամբու կ'եղի:

Մատիդ մաթիր խայարի <sup>3)</sup>

Հար եր <sup>4)</sup> հանիս պայարի <sup>5)</sup>).

Տղայ, քու վասն ես ծըռե.

Քու ումսու <sup>6)</sup> ընձնէ կորե.

Ժամու գռնէն դուս էլայ

Սրես պէս լուս էլայ,

Գնա, գնա, կալլ տես,

Պաղ աղբրի սաղը տմս:

<sup>1)</sup> Դեպի Պառին և գեպի Զօգան—հարստավին տաք երկիրներ, հաւքարար Միջադեռքի մէջ կիցնան:

<sup>2)</sup> Միծ վաճառական: <sup>3)</sup> Փուռ-առհաս: Հասուն-հասաձ (պտուղ փախարերաբար՝ տղջիկ): <sup>4)</sup> Թուզուն: <sup>5)</sup> Փաքք-առանց անիւի դութան.

<sup>6)</sup> Խմբ և ասոր (գարսու-զիշտ) մզ դիսէ:

<sup>7)</sup> Փափոխակի կրկնել խոր սքանչիւր տաղերէն ցերք:

<sup>1)</sup> Ո՞րու, մւս, <sup>2)</sup> Անք որու: <sup>3)</sup> Մետաքսի թիւ: <sup>4)</sup> Մինչև էլլը: <sup>5)</sup> Արդ: <sup>6)</sup> Յոյս:

Ես օրը կէս օր էր,  
 Խմ խաղալն էս օր էր:  
 Սինամ սարեր մօտիկ ա.  
 Տուն ա եկեր, գօտիկ ա:  
 Երկու քարի մէջ արօտ ա.  
 Տէրտէր փարին կարօտ ա.  
 Սըր - Կարապետ քու վանքը,  
 Խմ եարոշ նախշուն թամքը.  
 Ազուր մաղեմ դադացու,  
 Ճէլիկ աղբէր Եր կիդայ:  
 Ալուր մաղեմ դադացու,  
 Խմ աղբէրը տիրացու:  
 Ճրադ էրէք, լուս էրէք.  
 Կսանդա կիսէք<sup>1)</sup> դուս էրէք.  
 Ղռանի վերև ամպ էր,  
 Աղջկաչ գինը շատ թանկ էր:  
 Լուսնակը ցոլաց գնաց,  
 Դէմ առաւ ամպին, գնաց:  
 Սարից էկար դուն բարով,  
 Սրտիս գարկիր լեռ քարով.

### ՅՈՒՄԼԱՄԷՐ

Առումլամէր, ճան Առումլամէր.  
 Երէք, արէք, արէք, էրթանք Առումլամէր.  
 Դարձէք, դարձէք, էրթանք Առումլամէր.  
 Առումլամէր բանձր տեղ էր,  
 Օրէք, արէք, արէք  
 Երթանք Առումլամէր,  
 Դարձէք, դարձէք,  
 Էրթանք Առումլամէր  
 Ջուրն հիւրնդի գեղ էր,  
 Օրէք, արէք և ացն<sup>2)</sup>  
 Սիրած սիրածին չեն տայ,  
 Էդ լինչ կռապաշտ գեղ էր:  
 Ես սարն բանձր սար ա,  
 Տակն զննըլած քար ա.  
 Խմ առած մէկ ու ճար ա.  
 Գլխուն արաս ու զար<sup>3)</sup> ա

<sup>1)</sup> Տղաւք. <sup>2)</sup> Ճղարշնաւ քող.

<sup>3)</sup> Փոփոխակի կրկնել իւրաքանչլւր տողերէն վերք.

Լուսնակն հովեց հովն անուշ,  
Սիրականիս քունն անուշ,  
Լուսնակն էլաւ էրկնոց,  
Հով արվանի քունն անուշ,  
Հոտաղ մաղեր կ'արածայ,  
Մաճկալ՝ զլօխ դրած ա.  
Զիլ-զիլ քամին կը փշայ,  
Մեր մաճկի քունն անուշ,

Հով ա կանափի տակը.  
Էս ինչ յաւ ա բամբակը.  
Եկար մեր գռնով ընցար,  
Չըսիր, արի մեր բակը.

Երկանք ա աղի վրայ.  
Ջամամն ա թաղի վրայ,  
Երնեկ, ես մէկ դուշ էղնէնք,  
Իմ եարոջ պաղի<sup>1)</sup> վրայ:  
Ոչիսարն եմ էրև պերը<sup>2)</sup>  
Քաշեր եմ կաթի սերը,  
Ի՞նչ էնայ հէրն ու մէրը.  
Մեղաւորն ա տէրութը:

Լուսնակ էրէկ ու ցէրէկ,  
Կաղզգլնու նուռ բէրէք.  
Եղլուսս<sup>3)</sup> մուժդա<sup>4)</sup> կիտամ'  
Իմ եարոջ խապար բերէք.

Մառ մամ տնկե ծիրանի,  
Սղջի, մաղերդ իլլանի<sup>5)</sup>,  
Հազար դուռուշով չ'եմ տայ,  
Կիտամ աղքատ նիլանի<sup>6)</sup>:

Լուսաւորչու ծառները,  
Մատաղ բերին գառները,  
Լուսաւոր, զօրքիդ մեռնիմ,  
Զոկեցիր արդըրները:  
Քու փղա փաթի պիտառով<sup>7)</sup>,  
Եար մի ունիմ իհպարով<sup>8)</sup>  
Եար ճան իհպարիդ մեռնիմ<sup>9)</sup>  
Ճեպերդի լիք նուպարով<sup>9)</sup>.

<sup>1)</sup> Աէգի; <sup>2)</sup> Ոլխար կթելու տեղը; <sup>3)</sup> Թաշկինակ; <sup>4)</sup> Ընձայ; <sup>5)</sup> Գեղեցիկ; <sup>6)</sup> Երիտասարդ; <sup>7)</sup> Պղպեղ; <sup>8)</sup> Վէհանձն; <sup>9)</sup> Նոր միբ կամ նուռաբ ժաղիկ:

**Պ ա ր**

Պաղըմի, ճան պաղըմի.  
Սրի էրթանք կրունկու սար. մասու պաղըմի,  
Պաղըմի, ճան պաղըմի.  
Կ'ուզես հարուր, կլտամ հազար,  
Պաղըմի, ճան պաղըմի,  
Թուլս աչքերու խաթրի համար,  
Պաղըմի, ճան պաղըմի,  
Ճշկ ունքէրու խաթրի համար,  
Պաղըմի, ճան պաղըմի,  
Կայներ ես պութա-պութա.  
Մէջքդ կապիր պալաք փութա <sup>1)</sup>,  
Քեզի սիրէնք, չաէն սութ ա.  
Պաղըմի, ճան պաղըմի <sup>2)</sup>:  
Սրե զարկեր կամար-կամար,  
Մէջքդ կապիր ոսկի քամար.  
Քեզի սիրի ճանիս համար,  
Պաղըմի, ճան պաղըմի:  
Կունկ կանչայ սարերուն,  
Ըզապ <sup>3)</sup> տղէն էրէրուն,  
Քամին կիգայ ցօղալէն,  
Մառի թփեր դողալէն:  
Մառի տկի պաղ աղբուր,  
Սրծըթէ թաս, ոսկի ջուր,  
Ես կը վառիմ քու սիրուն,  
Թաս մի կ'ուզեմ, երկուս տնւր:  
Թի որ չի տաս, դողենաս,  
Գողէնաս, որբէվլընաս  
Կոր մի թառ մեր արտէն,  
Կտբաւ տոմնղուրիս <sup>4)</sup> դայտեն <sup>5)</sup>;  
Ծըրդ չենք, աշըդ դարձայ,  
Պէղերայ <sup>6)</sup> եարոջ նարեն:  
Եար մի ունիմ բուլանուխ,  
Հագիր նուպին, թորկեր պուխ <sup>7)</sup>  
Ճօղլակ պաժ <sup>7)</sup>, բարակ մատներ,  
Աչքեր պալաք <sup>8)</sup>, ընքներ թուխ:

<sup>1)</sup> Կըկներ իւրաքան իիւր տողին գերձ:

<sup>2)</sup> Նախշուն դօդին, <sup>3)</sup> Ամուրին, <sup>4)</sup> Ծըրդի սազ, <sup>5)</sup> Ըզանակը, <sup>6)</sup> Զգում չունեցողի, <sup>7)</sup> Մոպ, փնջիկի, <sup>8)</sup> Ալայելուչ հասակի, <sup>9)</sup> Նախշուն.

Գեղով կըսեն .քու եար ծուռ <sup>1)</sup> ,  
Մըջ իմ պրտին լալ ու տուռ <sup>2)</sup> ;

### թ ա ն ի մ ա ն

Ճանիման, ճանիման,  
Մեր դռան առէջ ծառ մի պնտուկ <sup>1)</sup>   
Ճանիման, ճանիման.  
Ճեր դռան առէջ ծառ մի պնտուկ,  
Ճանիման, ճանիման,  
Առնեմ .քեզի մտնիմ մնտուկ.  
Ճանիման, ճանիման <sup>3)</sup> ;  
Դու ելեր ես կ'էրթաս ի պէտ <sup>2)</sup>  
Խուշ չ'տեսնէր .քու հէրն ու մէր,  
Ոչ պէրն եղնէր, ոչ պէրի տէր,  
Որ զիս չ'էնէր էս դարտին տէր,  
Մեր դռան առէջ առու հանած,  
Ճեր դռան առէջ առու հանած,  
Միջու, միջու ուշան ցանած,  
Ընձի իմ եար միջէն հանած,  
Կյաց տանիք թափ քէլէցի,  
Զարկի լանկէժ <sup>3)</sup> էրդիք բացի,  
Իմ եար տուն չ'էր նստայ լացի.  
Փոռ ու փօշման թողի գացի :  
Մեր դռան առէջ քառսուն կարաս,  
Ճեր դռան առէջ քառսուն կարաս,  
Քառսուն կարսի գինին էր խաս,  
Ըմէկ կարսէն մէկ թաս ի տաս,  
Ըմէկ թասին մէկ պագ ի տաս,  
Թի դու չի տաս, դու գօտէնաս,  
Մեր տուն ձեր տուն մօտիկ-մօտիկ,  
Կրթանք քաղենք հորթկան խօտիկ,  
Բերենք դնենք մսուրին մօտիկ,  
Տեսնենք վիր եարն ա խօրօտիկ:  
Տօ եար, իմ արևն ու քում,  
Կաքաւ ծամն էր դրիր բուն,  
Ղուշթուղի բարձն էր գլխուն.  
Տօ եար, իմ արևն ու քում <sup>4)\*</sup> ;

1) Խենթ; 2) Թանգագին քար;

\*3) Արկնել իւրաքանչիւր տողի վերջ;

1) Կազին (Փնտըղ). 2) Ոչխարակիթ; 3) Ուքազ զարկեցի;

\*\*\*) Փողիսխակի կրկնել իւրաքանչիւր տողէն վերջ;

Կարսու իջեր վրբ քարին,  
Կառուցը լիքն էր արին.  
Եալլուզով վարդ եմ բաղէ՝  
Ճամփան իմ պղտիկ եարին:  
(Կրկնել, Տօ եար, իմ արևն և այն)

Աղջի, շլէն ծալ էրա,  
Շիլէն ծալ ու մալ էրա,  
Եղ քու կարմիր թշներուց  
Պագ մի տուր, հալայ էրա:  
Աղջի, քու անուն Թագուն,  
Ել, նստի քու հօր սաքուն,  
Զինար-մինար պյօյ ունիս,  
Երնեկ առնողիդ հողուն:

Ըսին էր, հա, ասին էր.  
Նրծթէ թփեր թասին էր՝  
Ես խօսք մասի, ըրլսիր՝  
Հօրթրթողի պասին էր:

### Թուխ փուշով աղջիկ

Ճառաֆով թուխ փուշով \*) աղջիկ

Դու բոլոր երես.

Ես ու դու ճուխտ կը քէլենք,

Դու մոլոր երես \*\*)

Ըռաւօտուն թունիր բոց

Կախիր եաօմաղ <sup>1)</sup>, թօրկիր պոչ <sup>2)</sup>)

Արի էնենք զիրկ ու ծոց՝

Պալիմ <sup>3)</sup> խմրի <sup>4)</sup> տար ու խոց:

Ըռաւօտուն թունիր մտիս.

Կախիր եաօմաղ, թօրկիր պուխ,

Սժէր Մուշն ու հուշանուխ:

Ըռաւօտեան թունիր վառ,

Գլօխ կտայիր խառ ու մառ <sup>5)</sup>)

Որբէլքցի զիսի առ:

\*) Ծառափ՝ թուխ փուշի. մետաքսէ. մեծ թաշկինակներ են. զարագչիները երբեմն իրենց գլուխը կը կազելին և հարսները իբրև քոյ կը բործած լին.

<sup>1)</sup> Քօզի կամ գլխի փաթաթոցի այն մասը, որ գէմքի վրայ բերելով բերան և քիթը կը ծած կէին: <sup>2)</sup> Քօզի վերջնն ձայրը, որ զիսի Լտելն կը կախեն: <sup>3)</sup> Թթերես: <sup>4)</sup> ողջանաց կամ մեղմանայ: <sup>5)</sup> Գոյն զգույն:

\*\*) Կրկնել փոփոխակի խրաքանձւ և առղւն վերջ:

Տօ տղայ, քու կիւզալ արե,  
Ընցար, ըստ տղւիր բարե,  
Զթօրիկը սրտիկս ի խռո. <sup>1)</sup>  
Չուր մի <sup>2)</sup> տարին ի բոլորի

Տիլրմ տիլանս Տիլո,  
Աանըմ հայրանս Տիլո,  
Առւխտակ <sup>1)</sup> քուլուիկ նոր հարս,  
Տիլրմ տիլանս Տիլո,  
Աանըմ հայրանս Տիլո,  
Առւխտակ հարս Դաւօ գեղէն  
Տիլրմ և ազն  
Ընկած էն զետ կը լողէն,  
Աանըմ <sup>2)</sup> և ազն.  
Երած էն ափ կը դողէն,  
Քընց <sup>2)</sup> նուան հատ կը շողէն.  
Առւխտան կացնած հրո իրաց,  
Մէկի ձեռ հինայ դրած,  
Մէկին ինչ որ կաքաւ նիսշած:  
Առւխտակ ու պալտ <sup>2)</sup> քումպէթ,  
Մազերը ճուխտ-ճուխտ էրէ՛ք  
Սըրբ - Յովիանէս ուլս էրէ՛ք:

Վ Ի Ճ Ն Կ Ի Ե Բ Գ Ե Բ

Վիճակն ամանի մէջ եօթը աղբիւրէ ջուր լեցուած և վրան նա-  
դիկներու փունջեր շարած ժամանակ կ'երգեն.

«Ճան կիւլում» կ'ասեմ, կը շարեմ,  
Տօպրակ լըցնեմ ու կարեմ,  
Ամէն աղջիկ մէկ ձու տայ՝  
Հերուրինեն <sup>1)</sup> կը հանեմ:

«Ճ ա ն կ ո ւ լ ո ւ մ»

Ճան կիւլում, ճան, ճան  
Ճան ծաղիկ. ճան, ճան:

(Կրկնել ալս տողերը բուն երգի իւրաքանչիւր տողէն յետոյ)

Վիճակ վիճակ վիլոլայ <sup>2)</sup>)  
Ճան կիւլում, ճան, ճան.  
Իիր դոյա կիւլ օյայ <sup>2)</sup>)  
Ճան ծաղիկ, ճան, ճան:

1) Վուրած: 2) Մինչեւ:

2) Ձոյգ: 2) Քընց... մանն... (աղաւազուած) - բան զ...: 2) Նախշունն:  
3) Գելութիւն. 2) Լնձանօթ բառ մ' է. 2) Երկու աման վարդ ըլլար:

Դաղիկ եմ քաղե, էս ա,  
 Կիւլիստ երեսդ ի տէսաց:  
 Համբարձում կեալի կետի <sup>1)</sup>)  
 Կրզար շիշաքա տիւտի <sup>2)</sup>):  
 Դաղկաձորէն ձէն կիգաէ,  
 Դաղկամէրը քններ ա:  
 Թըղ քնի, ուր քունն անուշ,  
 Վիճակ լսազալ շատ անուշ:  
 Երդիկը բուն եմ դրե,  
 Տղէկներ շուն եմ դրե,  
 Զաղջի դուռն ա չառւրմա <sup>3)</sup>):  
 Սև շուն էնեմ դառւրմա <sup>4)</sup>:  
 Խապար տարէք ըռեօխին <sup>5)</sup>),  
 Կեասկէ <sup>6)</sup> թափան շան մսին:  
 Էս ատէքը ջրով ա.  
 Մեր ըռեսը թրով ա.  
 Ո՞ր մէկ լսանի մօտ էրթայ՝  
 Խօսքեր ոսկի ջրով ա:  
 Դաղիկ եմ քաղե, էս ա.  
 Ճանիդ մէռնիմ, ճան փէսաց:  
 Դաղիկ քաղի մաղերով.  
 Վերև դրի շաղերով.  
 Վիճակ դրի վըր իշուն,  
 Վիճկի թևերն էր նիշուն,  
 Վիճակ դրի վըր փյին <sup>7)</sup>)  
 Փրցաւ, ընկաւ մըջ տըլին <sup>8)</sup>:  
 Ասին ա, հա, ասին ա,  
 Գինի լսեմ թասին ա,  
 Էդ կոկած – մոլած տներ,  
 Կիւլիստ ու նիշուն սներ.  
 Էկան ազապ <sup>9)</sup> տղէկները,  
 Կը մանին <sup>10)</sup> կատղուկ շներ:  
 Ցետոյ տները պտուած ու հաւլիթ ու եղ հաւաքած առեն՝ տան  
 փոքրիկի անուան «զովք» կ'ըսն.  
 Կանչէք կանչէք, (օր. Ծրաէնին),  
 Արսէնի ձին ջորի եա.

1) Համբարձում եկաւ, անց աւ. 2) ազջիկներ վարդին ընկան (հասան,  
 անսան կամ գտան իմաստով). 3) Վանդակապատ: 4) Խօրոված միս: 5) Դիեր  
 տանուաէր: 6) Տղաքներ: 7) Թթամբ, դար: 8) տիբ-տիզմ-ցեխ: 9) Ամոքի  
 10) Կը նմանին:

Երսէն ալ -իսնձորի ենա.  
Երսէն նստե դէրանին,  
Ուսկի զաւալ 1) թէրանին. մ զայրաբոր 2)  
Երսէն ուր ձին թամքեր ա. մասնաւութաւուն  
Քշեր մեյդան ընցեր ա. մ մասնաւուն  
Ընձրե էկեր, թթչեր ա. մ պարուն  
Երև զարկեր; չորցեր ա. մ պարուն  
Խընճ քաֆուր փարս բացւեր ան.  
Երսէն նստե տօւակին, մ մասնաւուն  
Խելքն ու միտքն ա փեռակին 2);  
Խմեր ա նուան զինին,  
Հոտ կէնայ մանիշակին.  
Որտէնի ձին արօտն էր. մ մասնաւուն  
Քուրն ուր աղօր կարօտ էր. բաւարա մասնաւուն

## ՀԱՆԱԾՆԵԿԱՆ ԵՐԴԵՐ

## Թագւորի գով

Ա

Թագւոր բարով, հազար բարով,  
Դուն վարդ ես կանաչ տերևով,  
Երուսաղէմ զարևդ օրշնէ (օրնէ),  
Մէկ Սուտրծու գօրութենով.  
Թագւոր բարով և այն  
Դուն վարդ ես և այն  
Սուրբ Վարդիհէր զարևդ օրշնէ;  
Մէկ Սուտրծու և այն.

(Ծաղէս կը կրինուի, միայն երրորդ տողը կը փոխուի, այս  
աց սուրբերու անուն տալով:

Սուրբ Կարապետ զարևդ օրշնէ,  
Խջմիածին զարևդ օրշնէ և այն և այն:

Թագւորն էկաւ թագն ի գլօխ,  
Կիւմիւս խանչալ պէլընտա եր. 1)  
Սուրբ Վարդիհէր Կաղըզվոնցին՝  
Քու մօւրաթըն տէր:  
Թագւորն էկաւ թագն ի գլօխ,  
Տօր բարամտան խօնչա կիւակր. 2)

1) Հովկի սիսու 2) արհեստ.

2) Արծաթ խանչալ վրան կոտած: 2) Տօրս կողմէն խօնչու: (Ճաղի  
կ ոմ տմաններու մէջ դրաւած ծրաբներ, կապոցներ-նուեր) կուգայ:

իջմիածին՝ Երևենցին

Քու մուրատըն տէր:

Դուրսպա-լարի նախըօյի որը<sup>1)</sup>:

Սուրբ Կարապետն՝ էր Մշեցին

Քու մուրատըն տէր:

Թագւորն, էկաւ թագն ի զովս,

Ճիզմալարի ժանարի որը<sup>2)</sup>

Երուսաղէմմէջ աշխըր բին

Քու մուրատըն տէր:

Դ

Թագւոր, ինչ բերեմ քե նման,

Քու կանաչ արև քե նման,

Ին աղօթրան որ կը բացւէր

Բացւի արևուդ վրան:

(Կրկնել ամբողջ տունը, խև երրորդ տողը՝ փոխել այսպէս). —

Ին սրալասան որ կը բացւէր.

Ին բրարիոն որ կը բացւէր.

Ին անթառան որ կը բացւէր.

Ին արեգակ որ կը բացւէր և ազն և ազն:

Դ

Մեր թագւորն էր խաչ.

Խաչիոչ – խաչ ու մաչ.

Պինիեն<sup>3)</sup> էր կարմիր,

Երևն էր կանաչ:

Մեր թագւորն էր խաչ.

Խաչիոչ – խաչ ու մաչ.

Կոսպանդն էր կարմիր,

Երևն էր կանաչ:

(Կրկնել ամբողջ տունը, խև երրորդ տողը՝ փոխել այսպէս). —

Պըսակն էր կարմիր.

Սօլերն էր կարմիր.

Դուրսպէքն էր կարմիր.

Գօդին էր կարմիր և ազն և ազն.

Ե

Մեր թագւորին Տաղիկ պիտէր Տաղիոնաց.

Մաղիկն էլ ընչէնի պիտէր Տաղիունաց.

1) Դուրսպաները նախշուն են:

2) Ճիզմաները (ռանաման) ֆանարի են. ֆանարի, ճիզմայի ընտիւն տեսակն է:

3) Պինիեն—կարմիր մահուդէ վերաբիուի մէկ տեսակն է:

Մաղիկն էն լոնկենի պիտէր ծաղկունաց.

Որ փըթըթէր թուփն ու տերև հըտ իրաց:

Մեր թագւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,

Մաղիկն էն նունուֆար պիտէր ծաղկունաց,

Քաղէք, բէրէք, մեր թագւորին ծաղկունաց,

Որ փըթըթէր թուփն ու ծաղիկ հըտ իրաց:

Մեր թագւորին ծաղիկ պիտէր և ազն:

Մաղիկն էն ընչէնի և ազն

Մաղիկն էն մանուշակ և ազն:

Որ փըթըթէր թուփն ու ծաղիկ և ազն:

(Յաղէս կրկնել տունը ամբողջ, խակ երրորդ տողի ծաղիկներու անունը փոխել).—

Ընթառան. բրաբիոն. պալասան և ազն:

Է

Երուսաղէմ ուլստատեղ էր,

Ամամխըներ Օրաբստան էր,

Թուլս ու բէտ<sup>1)</sup> բէտէ աչքեր,

Նմանի ժամտան խաչեր.

Բոլոր երես, պղտիկ բէրան,

Նմանի ժամտան խորան.

Մեր թագւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց

Որ փըթըթէր ծառն ու ծաղիկ հըտ իրաց:

Է

Գացէք, ասէք, թագւորի մօր,

Թըղ գայ, նստի դարպաս էնայ,

Մունտր դնայ սուրբ սեղանին,

Աստծու բարին մեր թագւորին:

Գացէք, ասէք, թագւորի հօր,

Թըղ գայ, նստի դարպաս էնայ,

Մունտր դնայ սուրբ խորանին,

Խէրն ու բարին մեր թագւորին:

Գացէք, ասէք, թագւոր աղօօր,

Թըղ գայ, նստի դարպաս էնայ,

Մունտր դնայ սուրբ սեղանին,

Աստծու բարին մեր թագւորին:

Գացէք, ասէք, թագւոր քրօջ,

Թըղ գայ, նստի դարպաս էնայ,

Մունտր դնայ սուրբ խորանին,

Խէրն ու բարին մեր թագւորին:

<sup>1)</sup> Բէտ—խոշոր:

Լ

Եղ դիզան,<sup>1)</sup> բէտ—բէտ դիզան,  
կէ՛ք, տեսէ՛ք էն հրն էր,  
—եղ դիզան բէտ—բէտ դիզան,  
Գեղի ըլէսն <sup>2)</sup> էր,  
—ճընճըններ ճըլվըւալէն,  
կէ՛ք, տեսէ՛ք էն հրն էր,  
—ճընճըններ ճըլվըւալէն,  
Սարիաւըրդներն էն:  
—Կարըւներ կըւկըւալէն,  
կէ՛ք, տեսէ՛ք էն հրն էր,  
—Կարըւներ կըւկըւալէն,  
Վարդապետներն էն:  
—Սարեկներ սըւսըւալէն,  
կէ՛ք, տեսէ՛ք էն հրն էր:  
Սարեկներ սըւսըւալէն,  
Մեր տէրտըրներն էն:  
—Ճուն էկաւ պարկն ի բէրան,  
կէ՛ք, տեսէ՛ք էն ո՞րն էր:  
—Ճուն էկաւ պարկն ի բէրան,  
Գեղի դզիրն <sup>3)</sup> էր,  
Ցախաւել գռան լչտեւ,  
կէ՛ք, տեսէ՛ք էն ո՞րն էր:  
—Ցախաւել գռան լչտեւ,  
Գոզի կնիկն էր:

### ԶՈՒՄՐՃԵԼԻՔ

#### ԶԻ ՄԵ

Զի մեմ առեր քսան փարա.

Ոտներ չալ <sup>1)</sup>, ա, մէջքն ա եարա <sup>2)</sup>

Տանին, կսպեն նխշուն օտէն,

Առէջ թալեն <sup>3)</sup> քօտա <sup>4)</sup> խոտէն.

Փրցեր պազ ջուր կիզայ կօտէն <sup>5)</sup>,

Խեր չտեսայ էտոր մօտէն.

Սարօ թալի <sup>6)</sup> օխտակ սալեր,

Սարօն գուր ձին բարս <sup>7)</sup> ա նալեր <sup>8)</sup>

<sup>1)</sup> Դև. դիզան—խոտի գլու. գլուեր. ն սկ' զիզրան, զիզանք:

<sup>2)</sup> Գիւ զապետի. <sup>3)</sup> Խոլ բուզի կտ զապետի. ծառալ, շառուչ:

<sup>4)</sup> Պիսակ. <sup>5)</sup> Ալըք. <sup>6)</sup> Զդին: <sup>7)</sup> Տեսակը խոտ: <sup>8)</sup> Գանկի. <sup>9)</sup> Դամի:

<sup>10)</sup> Մուռն: <sup>11)</sup> պայտել.

Սարօն էկաւ համա-եանա,

Թռփառտեր մարդ կ'սպանայ.

Մարդ էլ չ'կայ դռներ բանաց:

### Լ Ե Գ Յ

Ջէղքայ<sup>1)</sup> բռէս<sup>2)</sup> նման էր բռւրդ<sup>3)</sup>

Ճըլսու ասքար<sup>4)</sup> զլմէն<sup>5)</sup> էլ քռւրդ.

Ճըլսու ասքար հասան փշեր.

Աղքայ հարսներ փալսան դիշեր:

Ճահ-Պաղին<sup>6)</sup> կայ փէտէ<sup>7)</sup> մշակ,

Նա՛ մե<sup>8)</sup> տեղ թօղին, նա էլ դօսակ,

Կաշի-բէկի արտն էր դիւան<sup>9)</sup>

Պասմա թումպան<sup>10)</sup> տարան տիվան<sup>11)</sup>,

Կալի-բէկի արտն էր դարի,

Պալեօն<sup>12)</sup> էկաւ, հազար բարի,

Քաղքի վերև գեղ կայ ձուշան,

Պալեօն էկաւ, կախներ նշան,

Ոսկին առան, զհացիք մոռցան:

Պալեօն էկաւ վըր խաչէրուն,

Թօփ մի թալեց Ծրաբներուն,

«Տիկմիշ<sup>13)</sup> մէջնիք իմ հայերուն»:

### Գ Ե Զ Կ Ա Խ Կ

Հա՛ս կէցէք<sup>1)</sup> մէկ բան ըսեմ,

Կէշ կնկայ դէպար<sup>2)</sup> կէնեմ.

Կէշ կնիկ-քու հօր հէրր...

Մածուն կուզեմ, թան կը բերես,

Թիզ մի բորբոս մուկն ի յերես,

Կէշ կնիկ կէղայ վերի թալէն,

Առլստակ միներ առէջ խաղէն,

Վէրուց դրեց իրան թաւէն<sup>3)</sup>,

Մէկն ինք կէրաւ, մէկ ճանաղէն<sup>4)</sup>.

Կէշ կնիկ նստեր ալուր մաղէր,

Ոջիլ կոտրէր ու խմոր շաղէր.

<sup>1)</sup> Դիւզի անուն: <sup>2)</sup> Դիւզապետ: <sup>3)</sup> Ծակունի: <sup>4)</sup> Զօրք: <sup>5)</sup> ամէնքը.  
Բոլօրը: <sup>6)</sup> Դիւզի անուն: <sup>7)</sup> Տեսակմբ գործիք, իշուկ: <sup>8)</sup> մե-մեզ: <sup>9)</sup> որումն:  
<sup>10)</sup> Վարտիք: <sup>11)</sup> Ատեռն. Դիւան: <sup>12)</sup> Կուպատաս: <sup>13)</sup> մի դպիք, մի վճառչը  
իմաստով:

<sup>1)</sup> Լւռ նզեք: <sup>2)</sup> Բանքաստնք: <sup>3)</sup> Կերակուր եփելու պղնձէ աման, տա-  
պակի: <sup>4)</sup> ճան աղա-կրկան քոյրը, տալ:

Չուր<sup>1)</sup> արմընկներ թիզ մի կեղտ էր:  
 Կնիկ մունիմ, անուն հռնէ,  
 Կէս գիշերին դեղ կը լրանէ<sup>2)</sup>  
 Փէտ կը վէրում ձեռ կը բռնէ:  
 Խրիկ ու կնիկ կը ու ըտան,  
 Փաթթւան իրուր թունիր մտան,  
 Կտոր մի շալէ շոր դտան:  
 Տեղ մ'որ շալէ կտոր եղնի՝  
 Եօրդան-օօտակ<sup>3)</sup> ես ինչ կէնեմ,  
 Տեղ ո'ր բարակ ճամբախ եղնի՝  
 Բարակ խօզան ես ինչ կէնեմ:  
 Հպարտ մարդու քիթն էր պօլօզ<sup>4)</sup>  
 Կէմի կտոր<sup>5)</sup> փաթեր քօլօզ<sup>6)</sup>  
 Հողարտ մարդն էր պարկեր սրահ,  
 Խալի<sup>7)</sup> կտոր քաշեր վրայ.  
 Զարխներ<sup>8)</sup> յոտներ կը ճռճռայ,  
 —Ես ինչ կէնեմ ճռվստ կօնտուրա:<sup>9)</sup>

### Մ ո ւ կ ի ւ կ ա տ ո ւ

Կատուն ըսաւ մկան. —Պատերու ծառայ.  
 Ճատ հնազանդ, խոհեմ, Զոգանի դառ ա.  
 Դիշեր ու ցերեկ նստայ քու ծակի դուռայ,  
 Կարօտ եմ որ լսեմ քու քաղցր բառը:  
 Մուկ ըսաց կատուին —Ես բարի բան չեմ,  
 Այ կեղծանոր կատու, քեղ կը ճանաչեմ,  
 Ես հողադործ բան մ'եմ, մարդանման չեմ  
 Սազը ձեռքս չ'ունի մ, ես մէկ աօրդ չեմ:  
 Կատուն ըսաւ մկան. —Քու բուն էրկէն<sup>1)</sup>, նեղ,  
 Կուզեմ որ շատնայ քու ազգական, ցեղ,  
 Կատարեալ հեկիմ<sup>2)</sup> ես ձեռ թալա<sup>3)</sup> քու պեղ<sup>4)</sup>  
 Աչքերս քուացեր ա. արի, էրա դեղ:  
 Մուկ ըսաց կատուին. —Փետնաս<sup>5)</sup> ու պարկիս,  
 Բսկի<sup>6)</sup> չեմ աւտայ<sup>7)</sup> թէ դու հիւանդ իս.  
 Առանց աւետրան ինձ կը քարոզիս,  
 Գինամ<sup>8)</sup> որ քաղցր մսիս կարօտ իս.  
 Կատուն ըսաց մկան. —Ճատ կարդացեր իմ,  
 Բոլոր աշխըրի փիրն իմացեր իմ.

1) Մինչեւ: 2) Պարտել, մանգալ: 3) Ռնկազին: 4) Արածալլու: 5) Խօտէն մանուած կապ: 6) Բրդիս: 7) Գիւարկ: 8) Խոլր, փաւաթ: 9) Տրեխ: 9) Կօշիկ:  
 10) Էրայր: 11) Բժիշկ: 12) Զգէ: 13) Ընչացք, պերկեշտ: 14) Փայտանալ-ստակիլ: 15) Բնաւ: 16) Ժնմ հաւատար: 17) Դիտեմ:

Նրբ ուրախութենով նստիմ վարժատուն.

Բերքու զաւակներ կէնեմ իմաստուն.

Մուկն ըսաց կատուին. — Գել ու զազան ևս.

Քաջառուծ ապան իս, ափսոս նազան<sup>1)</sup> իս.

Զաւակներս տամ, կը բռնես տանիս,

Սարշօսի<sup>2)</sup> նման քե մազա<sup>3)</sup> կանիս,

Կատուն ըսաց մկան. — Երազ մի տեսաց.

Բարեկամ մուկ նստեր հետո կը խօսայ.

Արդար խրատներս սխալ կը լսայ,

Հգինայ թի ուրին<sup>4)</sup> կէնեբ՝ ձի<sup>5)</sup> փեսայ:

Մուկ ըսաց կատուին. — Երազ մի տեսայ,

Այ կեղծաւոր կատու, ցիմար մի խօսայ,

Թի դառը կ'եղնի գէլերուն փեսայ,

Թող քու լսրատներն էլ խեղճ մուկն լսայ.

Կատուն ըսաց մկան. — Խյ նընս<sup>6)</sup> աղեկ նընս ա.

Քեաշիա<sup>7)</sup> դու դէր<sup>8)</sup> տեսնէր ինչ խօֆ<sup>9)</sup> ու բռւս ա.

Աղբէրս իշխան ա, հէրս բռկս<sup>10)</sup> ա,

Ես էլ կ'ուզեմ որ քե էնեմ ձի փեսայ:

Մուկն ըսաց կատուին. — Քու տնիկ վերան<sup>11)</sup>

Հուր եր<sup>12)</sup> բանաս, խփուս գարշելի բերան.

Ըմէն օր կը գողնաս քու տիրու մէրան<sup>13)</sup>

Տէրդի<sup>14)</sup> քե կը թալայ շներու բերան:

Կատուն ըսաց մկան. — Քու ծակի գուռն ա.

Դուս էլի, տես քու աներ նրն ա,

Քու թաժայ<sup>15)</sup> նշանլուն<sup>16)</sup> իշխանի քուրն ա.

Ո՞ն (ով) քե տիկմիւ<sup>17)</sup> եղնի, քունայ ու կուրնայ:

Մուկն ըսաց կատուին. — Գետին կը տափիս<sup>18)</sup>

Գլուխդ ի ծակ կը մտուս նեղ ու լէն չափիս,

Աղջկայ մահանով<sup>19)</sup> ընմի կը խարիս,

Որ ձեռքդ ի համնիմ արունս թափիս: \*

<sup>1)</sup> Տգէտ: <sup>2)</sup> Գինով: <sup>3)</sup> Մազա—օղիի հետ գործածուած մրգեղին:

<sup>4)</sup> Զինքը—<sup>5)</sup> Շի—ինձի: <sup>6)</sup> Ցեղ, սերունդ: <sup>7)</sup> Երանին <sup>8)</sup> Գայիր, տեսնիր:

<sup>9)</sup> Արմատ և բռյ: <sup>10)</sup> Գիւղապետ<sup>11)</sup> Աւերակ: <sup>12)</sup> Մինչէն երբի: <sup>13)</sup> Մածունի մայիսա—մաժուն: <sup>14)</sup> Քու տէրը: <sup>15)</sup> Նոր: <sup>16)</sup> Նշանած: <sup>17)</sup> Դպիր, վնասել:

<sup>18)</sup> Գետնի փակել, պահւըթիլ: <sup>19)</sup> Պատրուակով:

\*<sup>)</sup> Թուրի թէ այս երգը որևէ աշըդ ըսած լլլայ, բայց Ալոշկերտի մէջ լայտնի չէ այդ, այժմ շատ տարածւած ու ժողովրդականացած է:

**Թութուն** ամ խռամելուական արք

իսօր չորս օր թութուն չ'ունիմ: շատ մի ուն  
Կը մտածեմ կիւման<sup>1)</sup> չ'ունիմ,

Վառայ անթութուն, անթութուն:  
հուռութենէն<sup>2)</sup> թութուն քաշի,

Սև հողեր դլասուս քաշի,  
Վառայ անթութուն, անթութուն:

Երկու արտ ցանի թութուն,  
Կարկուտ էկաւ տարաւ պիթուն<sup>3)</sup>,

2'թորիկց մէկ տամար<sup>4)</sup> թութուն՝

Վառայ անթութուն, անթութուն:  
Երկու արտ ցանի գարի,

Խ'նչ իմանամ կարկուտ տանի,  
Պալբիմ<sup>5)</sup> թութնի գին կը հանի,

Վառայ անթութուն, անթութուն:  
Լօթի կետսէն դրած ան<sup>6)</sup> ֆաս:

Երուր կ'էնեն թութունի պա՛ս<sup>7)</sup> դո եւրաժ՝ և առ  
Երուր կ'ըսեն հնամաս<sup>8)</sup> մէկ տամար,

Վառայ անթութուն, անթութուն:  
Թութուն քաշեղ սիրտ կը խզայ,

Չունեցող կանչի մզայ<sup>9)</sup> ), վասար կ'էր կ'էր

2եռ կ'էրկնցու մէկ հատ կհեզայ.

Վառայ անթութուն, անթութուն:  
Թութնի քաշեղ ինչքան լաւ ա.

Առանց քաշեղ սիրտ կը ցաւայ.

Թութուն ա մանլիսի<sup>10)</sup> մազա.

Վառայ անթութուն, անթութուն:  
Ես Միսօն էնք Ալաշկերտոցի,

Սէլ լծի թութնի գացի, նստաց լացի,

Թութուն չէղաւ, նստաց լացի,

Վառայ անթութուն, անթութուն:

1) Յոլս: 2) անզուռապ կիրք ունենալի: 3) Բոլոր: 4) Կապաց: 5) թերեւս:  
6) Տղայք դրած են ֆէս: 7) Խօսք: զրոյց: 8) Գաւաչ: բայց հոս կը նշանակէ  
սիկոտի մէկ անզամ քաշեղը. օրինսկ. մէկ կում: 9) Մզալ-կոզի, նզան բա-  
րակ ձայն հանելը: 10) մազավ, խնճոյք:

Փիմիկ թուղթնի մասին \*

Գիշերս եմ քներ, քուն եղայց, յարթուն,  
Ոչ մարդ գինէր գէն սարէրու խուն,  
Ոչ զնստընու շատ քննուն  
Մէջ իտայ քընուն սրտիկս էր էլեր,  
Կեամի շուռ կիգէր <sup>1)</sup> վըր էն ծովերուն,  
Ճրագ մի կէր էն ծովու միջուն,  
Քանի էն ծով կործիլ <sup>2)</sup> կ'առնէր,  
Էն ճրագ կը պօծրունէր <sup>3)</sup> գունըգգուն,  
Մառ մի կէր էն տաշտի միջուն,  
Էն ծառ կէր տասն էրկու ճրդուն,  
Վրէն թափած էր հինգ հարուր թռչուն,  
Հաւք մի կէր մէջ էն հաւքերուն,  
Քառսուն տարի շինեց զուր բուն,  
Խին <sup>4)</sup> ի յնրաբայ էբեր <sup>5)</sup>,  
Հողն ի յնրաբատանէն,  
Քառսուն տարի շինեց զուր բուն,  
Էլաւ, կայնաւ ընէ զլատուն,  
Մափիկ էտուր <sup>6)</sup> ուր թևերուն,  
«Մեղայ» չ'էտուր մէկիկ Ըստծուն,  
Կրակ ընկաւ իրիցեց <sup>7)</sup> զինքն ու զուր բուն,  
Էն զուլումաթն <sup>8)</sup> որ եղաւ հրտ էդ խաւքերուն,  
Չէր էղեր հրտ Սդամայ որդուն,  
Ճունազ <sup>9)</sup> հասաւ ի Ֆուանզստուն,  
Պօրոս—Պետրոս հայոց անուն,  
Քաղցրիկ մէզօն որ կ'ասեն  
Զառուծ առե մըջ ուր թևերուն:

\* Այս երգ ըստոց կը պատմէր նաև «Փիմիկ» թռչունի, մասին ուրիշ աւտոդութիւն, զօր պատմագիր «Ալաշկերտ», հաւատորի բաժնին մէջ:

<sup>1)</sup> Նաւ կը պարտէր: <sup>2)</sup> Ջրմիւր դահնաւը, ալի կոծովիլ: <sup>3)</sup> Կը պաձանար, կը փայէլը: <sup>4)</sup> Շիւզը: <sup>5)</sup> Խերաւ: <sup>6)</sup> Մափ տալ: <sup>7)</sup> Ելբեց: <sup>8)</sup> Մեծ վր.  
Նաս: <sup>9)</sup> Լուր տեղեկութիւն: